

ԱՐԵԿԵԼԵԱՆ ՄԱՍՈՒՀԱԼ

ՀՅՈՒՂԻՄ ԱՄԱՍ

ՉՈՐՐՈՐԴ ՏՐԻ

1874

ՆՈՅԵՄԲՐԵՐ

ԳՈՐԾՎԱԿԱՐՔԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ԽԱՐԵՎԱՆՅԱՐԵԱԿ
ԽԵՐՄՈՒՆԿԱՆ ՎԱՐԺԱԽՄԱՆ
Ի ԵՐԵՎԱՆ ՄԵԾԱ ՄԱՋԱՆ ՕՐՈՅ ՄԱՐԻ Յ ՏԱՅԻՆ
ԳԵՐԵՎԵՆ
ԵՅ ՆԵ ԵՑԼՅ
ԱՄՈՒՆ ՄԵ ԵՐԵՎԵՆԵՐ

ՉՈՐԾԻՄ

ՏՊԱԳՐԱԿԱՐՔԻՒՆ ՏԻՎԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

ԴՐԱՄԻ

1874

ՆՈՅԵՄԲԵՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ*

Ակլիսա՞ այս մատենապիրներուն ովէս մի քանի թերութիւններ ուշ
նի՞ բայց ընդհանրապէս ինչնին իրու առանձին մի գաս պէտք է նկատ-
աել զանի ։ մեղի ծանօթ պատմագիրներուն մէջ չկայ մի սպառմագիր
որ անոր չափ Ճշմարտոթեան անտարբեր երեցած լինի ։ Կ'երեկի թէ
հոգ տարեր է միայն իր դրբին նկարչական մասին և հայրենեացը նպա-
տուոյն ։ Միւս կողմէ՝ զրականութեան բոլոր շաբքին մէջ չենք կրնար
դժնել այսչափ լաւյօրինուած մի վատ բան ։ յետին ծայր կենդանի և
շնորհալի է պատմութեանը նկարչական կողմը ։ Գրեթէ հրաշալի է
ուշադրամ զբայցումներու և շքեղախայլ խօսից առատութիւնը ։ Իր

միտքը մի հող է որ երբէք չսպառիր, աղրիւր մի է որ կարծես թէ երբէք չծորիր։ Յորդառատ կ'վայթի, այլ սակայն ամենեին սպառման նշան չտար։ Ճաւանօրէն՝ միշտ թարմ, միշտ անուշ, միշտ յատակ, միշտ գիւրասահ լեզուի և մտածութեանց այս յորդութիւնն էր որ քննաբաններն այնիքան վէճի առիթ ընծայող այս բայցարութիւնն անոր յարմարյուցին, Lactea ներթաւ։

Լիվիսի բոլոր արժանիքն ու թերութիւններն իր աղջին բնաւորութեան զոյնը կ'առնուն։ Ինք իսկ և իսկ հոռամայեցի մատենադիր մի էր։ Վէս քաղաքայի մի հասարակայինութեան որ իրակէս աղաւութիւնը կորուսէր էր, այլ սակայն ձևերը զեռ ևս կ'պահէր—իրօք միահեծան մի իշխանի հպատակն, բայց ըստ իր կարծեաց նա աշխարհի տիրապետաց մին էր, իր լծին ներքե ունենալով հարիւրաւոր թաղաւորներ, և իր լիբրեն միայն ասաւուածներ։ Հետեւապէս՝ Լիվիս նախկին ժամանակայ վրայ կ'նայէր այնպիսի զգացումներով որ բոլորովին տարբէր էին բնապէս իրեն ժամանակակից յունաց տածած զգացումներէն, որ առ յաղայս համայն Հռոմէական պետութեան զրադէտ մարդոց մէջ լնդհանուր դարձան։ Անկասէր նա անցեալն յօժարամիտ զմայլումով՝ չէ թէ անոր համար որ ներկային հետ հակազատ կետ կ'լնձայէր, այլ վասն զի ներկային առաջնորդէր էր։ Անցելցն կը զիմէր՝ չէ թէ վէսյիշատակներու մէջ ազգային արդի ասպականութեան նշանները սքօղելու, այլ ազգային փառաց յառաջադէմ շաւիղը զծելու։ Իրաւ է որ հին դարուց համար իր ունեցած ակնածութիւնն իր վրայ այն մի քանի տապաւորութիւններն յառաջ բերին որովարդէն տարբէր ճամբուլ անոնց ենթակայ դանուուններն զգածուեր էին։ Լիվիս փոքր ինչ ասոնց ծայրայեղութիւնը, ծածկաբանութիւնն, և՝ ի բարոյականին խստրմանց համար յօժարամատթիւն ունի։ Սակայն այս մասին իսկ մի ասրբերութիւն կ'նշմարենք։ Անոնք յափշտակութեամբ կ'իսուին հայրենասիրութեան և ալպատութեան վրայ վէրացական կերպով, մինչդեռ նա չկարծեր որ Հռոմէն զատ մի ուրիշերի սիրոյ արժանի լինի, և եռանդապին կ'սիրէ ալպատութիւնը՝ չէ թէ իրբե աղաւութիւն, այլ իրբե հոռմէական հիմնարկութեանց յարակից մաս եղող ալպատութիւն։

Կեսարայ սկատերազմաց հակիրճ և վայելու նկարագիրներուն վրայ շատ բան ըսելիք չկայ։ Զինուորական տեղեկագրերու համար աննման օրինակներ են, բայց չեն սկատութիւններ և չեն կընար այդ պահանջումն ունենալ։

Հին քննաբաններն՝ Սալլուստոսն Ավվիոսի կարդը կ'զասեն . և անտարակյս այս հեղինակին գործոց մեջի հասած մի փոքր մասն իր տառապնին վրայ մի մեծ զաղափար տալու ռահմանուած է : Բայց իր ոճը շատ ախորժելի չէ . և իր ամենէն մեծ գործն , Կոստիլինայի դաւագրութեան նկարագիրը , աւելի մի կուսակցութեան հնարիմասս պարսաւատեարի գրաշմն ունի , քան թէ մի պատմութեան : Տարօրէն հակաբանութիւններովլի է , որ անմենինի մնալով հարկաւ կասկածներ կ'զրգուեն պատմութեան տուազութեանը մարին : Իրաւ է որ՝ այդմ մի շատ մոռցուած պարագաներ թերեւ իր ժամանակակից մարդոց յայսնի էին , և հետեապէս մեղի կասկածնելի և մութ երեցած մասերն ակներե կ'ցուցընէին : Բայց մի մեծ պատմաբան պարաւոր է յիշելոր հեռաւոր սերունդներու համար , այսակի մարդոց համար կ'զրէ որ կարող պիտի լինին նշնորել յայտնի հակառութիւններ և զանոնք համաձայնելու միւ ջոցները չպիտի ունենան . Միայն իր հնարագիտութեան չնորհիւ կարող ենք ենկ Սալլուստոսի արքանահաւատութիւնը միտել : Բայց ըստ ինքեան այս նշանաւոր դաւին վրայ իր ժամանակակից պատմիչներէն մեզի հասած տեղեկութիւնը նոյն առարկութեան ենթակայ է , և բանիքուն մարդոց կողմէ նոյն թերահաւատութեամբ կ'կարգացուի : Ամէն ինչ միակողմանի է : Մի պատմախան հասած չէ մինչև մեր օրերը : Սակայն՝ ամբաստաններու յայտարութեան նոյնելով՝ ամբաստանեալն անպարտութեան իրաւունք ստուցած կ'երեւի : Կ'պատմն մեղ թէ կատիլինա Վետաեան մի կուսանի հետ գաւագրեց և իր հարազատ որդին սպաննեց : Իր տունն խաղամուներու և անառակերտու գուբ մ'էր : Մի պատմանի չէր կարող իր տանը ու մէն ներս մննել առանց իր հարստութիւնն ու համրաւը վտանգի դնելու : Եւ սակայն այս մարդն էր որուհետ կ'փափաքէր մրցիլ հասարակասետութեան առաջին պաշտօնին համար , և զսր նա նկարագրեց՝ գաւագրութեան աղէտալի վախճանէն ետեւ՝ իբրև մի կատարեալ կեղծաւոր , որ զինքն անդամ պատրեր էր , և մեծ հնարագիտութեամբ՝ մի լաւ քաղաքացիի և մի լաւ բարեկամի գերան խաղացեր էր : Կ'պատմն մեղ թէ այս գաւագառնութիւնն յետին աստիճան չարաշնար էր և յուսահատական , և զրեւթէ նոյն պահուն կ'յաւելուն թէ ժողովրեան մի մասն և մի շատ աղնուականներ անոր նպաստաւոր էին , թէ Հռոմի ամենէն Ճոխ քաղաքայիններն ամէն ստայուածոց աւաբառութեան եռանդաղին կ'փափաքէին , և իր բարձրադար պաշտօնականներն ամէն կարդ ու կանոնի կարծանումը կ'ուղելին , թէ ապացուցուած կասկածներ կային որ Կրէ-

սոս, Կեսար, և Լանտոլըս նոյն տարուան ընտրեալ Հիւպատոներէն մին, միախորհուրդ որաշեր էին տասլալելու այն Հիմնարկութիւններն որոց պարտառը էին իրենց վայելած բարձրադոյն սպատիները, և մի ընդհանուր անփշասնութիւն հաստատելու : Կ'պատմոի թէ այս ամեն իրաղութեանց տեղեակ մի կառավարութիւն կ'հանդուրժէ որ դաւաճանն, որու աստիճանը, քանքարն ու արիութիւնն զինք չափազանց վլանգաւոր կ'կայուցանէին, Հռոմէն անսարգել հեռանայ : Կ'պատմութէ սարուեներ ու ըմբիշաներ պատրաստ էին քաղաքացոյ գէմ զիւնուօրելու : Սակայն կ'տեսնենք որ Կատիլինա զաւնդ զունդ իր բանակը ստուարացընելու համար եկող սարտուկները կ'մործէ որ, որպէս զի չկարծուի թէ՝ ինչպէս նոյն ինք Սալլուստոս կ'յացանէ, անոնց դասն քաղաքացոյ դատին հետ կ'զուղորդէ : Աերջապէս՝ կ'պատմոի թէ պաշտօնատարն որու համար ընդհանրապէս կ'ըստին թէ իր ամեն կարդի քաղաքացիներն մեծ կործանումէ և կոսորածէ աղատած էր, այնչափ ժողովրդեան անհամաց երեցաւ իր վարմանքով, որ իր պաշտօնավարութենէ ետք՝ զզալի նախատինք մը, և ապա մի ծանր պատիժ կրեց :

Սալլուստոս կ'ըսէ մեղ՝ ինչ որ արդարե Կիկերոնի նամակներն և Ճաճառերն ըստ բաւականին կ'հաստատեն՝ թէ մի քանի մարդիկ դաւադրութեան նողիալի և գմնեայ մասերն սպարզապէս կառավարութեան կողմէն համարած բաներ կ'համարէին, որպէս զի իր մասահմանադրաւի կան մնօրէնութիւններն արդարացընէ : կ'խոստովանինք որ մինք ևս այս կարծիքն ունինք : Անարակօյս մի հզօր կուսակցութիւն կար որ կ'փափաքէ բաւական միավայր վոփիսել : Երբ Պոմպէ ոս բանակին հրամանատարութիւնը կ'վարէ՛ չէին կարող իրենց խորհուրդն ի զործ գնել մինչև որ զօրութիւնն ի հարկին՝ զօրութեամբ վտնելու միջոցները չարտաստէին : Այսպիսի բաներ Հռոմէ խորութեանց մէջ սովորաբար կ'տեսնուէին : Գրաւադիրներու գէմ եղած միւս ամբաստանութիւններն այնչափ հակասական և անհաւանական են, որ անոնց բնաւ հաւատ չենք ընծայեք . . . :

Արդարե՝ լատին սպատմաղբաց մէջ՝ Տուլիպոս ամենէ մեծն էր : Իւրաւ է որ իր ոճն ոչ միայն ինքնին անսուղիղ, այլև մի քանի նկատմամբ՝ պատմական շարադրութեանց անյարմար է : Ներդարձութիւն ազգելու սէրն անդր քան չափաւորութիւն կ'սանի : Մի զեղեցիկ պատմութիւն զեղեցկապէս կ'պատմէ : Բայց չէ կարող պարզապէս պատմել մի պարզպատմութիւն : Կ'յուղէն նա, մինչև որ ամեն յուղմունք

իր ներդործութիւնը կ'կորուսէ : Թառկիզիղէս , ինչպէս որ արդէն դիտացինք , անզարդ յատակաւթեամբ և լրացրի համառօտութիւնամբ կը պատմէ՝ սովորական զործողաւթիւններ . իր նկարի լու մնջ կարողութիւնն այնպիսի դիսկայ համար կ'վերապահէ որոց ամենէն մանր պարագաներն ուշագրաւ են : Շէնքին սպարզութիւնն մի նոր փայլ կ'յաւելու անդամանգին : Տակիտոսի մէջ այնպէս հատուածներ կան որ գեր 'ի վեր են Թուկիզիգէսի ամենէն ընափի հատուածներէն , բայց անտիք նոյն Ճարտարութեամբ բայցարուած և յդկուած չեն : Ըատ աւելի սքանչելի են երբ ամբողջ զործէն քաղուին քան երբ իրենց աեղն երբեմն և նախընթաց ու հետեւոր մասերուն հետ կարգացուին :

Բնաւորութեան նկարագրի մասին Տակիտոս պատմագրայ մէջ աննման է , և ողբերգակներու ու վիստասաններու մէջ անդամ շատ քիչ զերազանցող ունի : Բնաւորութեան նկարագիրը ըսելով՝ լաւ և վաս հանդամանայ մի երդիծական ցուցակներու յօրինումն և անոնց ներքեւ հանձարեղ մարդկան անուններ գնելը չենք իմանար : Զկայ մի հեղինակ որ Տակիտոսին չափ ճարտարութեամբ կատարած լինի այս բանս , բայց այս չէ իր յատուկ փառքը : Այն ամէն անձինքն որ իր զործոյ մէջ մի մեծ տեղ կ'բռնեն , բնաւորութեան այնպիսի մի անձնականութիւն ունին որ կարծես թէ իրենց բոլոր խօսից և ընթացից մի յատուկ գրոշմ կ'ընծայեն : Կլսափոս , Կէրոն , Օթն , Երկու Ազրիպինաներն հրաշակերաններ են : Բայց Տիբերիս քան զամէնն Ճարտարահիւս հրաշալիք մ'է : Պատմագիրն մնզ ծանօթացընելու ձեռնարկեց չափազնց մի խաւարային և անթափանցելի մարդ — մի մարդ որու Ճշմարիտ տրամադրութիւնն շինովի առաքինութեան բաղմակնձիու ծալքի մէջ ընդ երկար ամբոփուած մնաց , և որու զործոյ վրայ մի զարմանալի քօղ կ'ձգէին իր երիտասարդութեան կեզծաւորութիւնն և ալեռը հասակին առանձնութիւնը : Պարտէր նաև բանաւորին սեթեեթ յատկութիւններն 'ի լոյս ածել որպէս զի ակներեւ երեին և կարող լինինք տեմնել ծածկյթն և ասոր ծածկած մնշութիւնները : Պարտէր նաև յոյանել թէ լինչպէս հետպհետէ հասարակագետութեան առաջին պաշտօնեայն , վիճաբանութեան ապատորէն մասնակցող մի ծերտկոյակ անդամ , իր ազնուական աստիճանակիցներուն հետ գաշնակցող մի աղնուական՝ միւ ասիսական սուլթանի փօխուեցաւ . պարտէր նա նկարագրել արիտթեան , ինքնիշխանութեան , խորունկ քաղաքականութեան կողմէ երեելի հանդիսացնը մի բնաւորութիւն . պարտէր նա ծերութեան և մօսաւուտ մաշուան աստիճանական ներդործութիւնը նշանաւ

կել այս մարդուն վլրայ որ զօրութեան և տկարութեան տարօրինակ խառնուրդ մ'էր . սրաբուկ հայոց տալ աշխարհի ծեր վեհապեան՝ որ թէե մի կերպ մանկութեան մէջ ընկնելով՝ արտակեղբոն յօժարութիւններու և վայբենի ընթացից ենթակայ կ'զանուեր , սակայն երբեք իր անաշառ և սուր իմայականութիւնը չէր վնասուած , այլ իր զօրութեան տրամանալը կ'զլար , անխորհուրդ հեշտասիրութեամբ կ'տաղնապէր , բայց դարձեալ մինչեւ վերջն ամենէն սրատես դիատղն , ամենէն հնարագէտ կեղծաւորն և ամենէն ահուելի իշխանը մնաց . Ենուն ծայր դժուտրին էր այս սրատիկը նկարագրել , և սակայն Տակիսոս զրեթէ կատարելապէս յաջողիցաւ :

Այսպէս սրատմութիւն զբելու համար պէտք եղած տաղանդն մի մծ թատրերդուի տաղանդին հետ շատ նմանութիւն ունի : Մի միայն յայսնի զանազանութիւն կայ : Թատրերդուն կ'ստեղծէ , սրատմակիրն միայն կ'յարդաբէ : Գործադրութեան կերպին մէջ չէ տարբերութիւնն սյլ յղացման ձեին մէջ : Շէքբորիր իր երեակայութեան մէջ տնեցած մի օրինակի կ'հետեւի . Տակիսոս արտաքուստ արուած մի օրինակի : Տիւքերիսոփ մօս Համբէտն է ինչ որ է Լաօքուն Ռուպիյարի Նիւթոնին մօս :

Տակիսոս իր արուեստին այս մասին մէջ արդարեւ ոչ հաւասար ունի և ոչ երկրորդ հին սրատմուրայ մէջ : Թէե Հերթագուստու մի թատրերական ձեռով զբեց , սակայն թատրեալական հանճար քիչունէր : Ստէալ իր գործածած արամախոսական սրատմութեան աշխայց և շարժում կ'ընծայէ , բայց լիովին նշանակական չէ : Քանինոֆոն կ'ախորդի իր ընթերցողներուն երկար բարակ ըստելու թէ ինչ կարծիք ունի այն անձեռու վրայ որոց արկածները կ'պատմէ : Բայց նա չցուցըներ անոնց իր մարդիկն որպէս զի ինքնին զամանք զամանք : Աիլիսոփ դիւցազւններն , Շշմարիտ կամ ելեակայական , քան ամէնքն անհամարածներ են , ՚ի բայ առեալ Պլատարդոփ դիւցալունները : Արդարեւ այս մասին Պլատարդոփ եղանակին կ'յիշեցընէ մեղ Եւրոպայի այն պանդոկներուն խոչհարարութիւնն , անկիլիսի ուղուողներու սարսափ առուող բանն , որ է մի աննկարագրելի արդամակ շարտնակ սանին մէջ կ'եռացընեն , և պատրամակին սեղանն եկած ամէն կերպակուրներու մէջ անխափիր կ'լեցընեն : Թուկիդիդէութէե շատ հետուէն՝ Տակիսոսէն վերջը կ'այ : Իր Պերպիլէմն , իր Կիլիասն , իր Կլէօնն , իր Բրազիասն յաջողութեամբ նկարագրուած են : Այս սրատկերներուն ուրուակիծը ստուգ , դցնն ազատ է , բայց լնդհանուր կերպարանն և բայցարութիւնն որո՞շ :

Տօն Քիշօտի գրաւուն քահանային պէս՝ տաղառոկ զլալու կ'սկզբնք մի առ մի զիրքերը վար առնլով ուրոյն ուրոյն դաստիքնու թիւն լնել, և աւելի արամարի ենք անսնց վրայ միահամառ վճիռ մ'արձակել։ Հետեւասպէս՝ փոխանակ արջի զանազան սկատմադրաց թերու թիւներն ու արժանիքը նշանակելու, սիմոնի ցոյց տանք թէ որ կ'աւերու մէջ իւրնց նախորդներէն կ'եր ՚ի վերոյ են և որ կ'էաերու մէջանցաղատան։

Ստողիւ այժմեան սկատմի չներն՝ մէկ կ'երազով՝ աւելի ճշմարտու թեան յարեցան քան մի շատ յոյն և հռոմայեցի մատենագիրներ։ Իւրենց պատմազրութիւնն աւելի հետաքրքրաշարժ լնելու համար պէտք չեն զդար նկարազրութիւններ, խօսակցութիւններ, յորդորակներ մէջ բերելու, որ միայն իւրենց յատուկ երեակայութեան մէջ գոյութիւն ունին։ Այս վերանորոգութիւնն աստիճանաբար մուտ գտաւ։ Եւրոպայի նոր առզերու մէջ պատմութիւնն սկսաւ ինչպէս որ յունաց մէջ սկսեր էր վիպաղբութիւնը։ Ֆրուտասար մեր Ճերոգոսուսն եղաւ։ Խամլիսն առ Եւրոպան էր ինչ որ Աթէնք էր սու Յունաստան։ Աւսակ Խոալիոյ մէջ՝ սկատմադրութեան աւելի Ճշգրիտ և առնական մի ձեւ մտաւ. կանուխիկ։ Մարգիալլէլի և Կիչիալլինի Ալիլիոսի և Տուկիդիկէօփ հետեւութեամբ, Ճաւեր յօրինեցին իւրենց պատմական անձերուն համար։ Բայց երբ Լորէնցօփ և Լէօնի դարն ողեռող գասական խանդն փոքր առ փոքր դադրեցաւ՝ այս անհեթեթ սովորութիւնն ՚ի բաց ձգուեցաւ։ Գրանայի մէջ՝ ինչպէս որ կ'երեսի, տակաւին այս ձեզ փոքր ՚ի շատէ կ'շարունակուի։ Մեր երիկին՝ եթէ՝ մի մատենադիր այսպիսի փորձ փորձէ՝ ծալու և արհամարհանաց կ'ենթարկուի։ Թէ արգեօք վերջին երկու դարերու պատմազիբներն աւելի Ճշմարտութիւններ կ'խօսին քան թէ հինեցն թերես կատկածելի երեսի, բայց այս սոոյզ է որ անոնք աւելի քիչ ստութիւններ կ'արտայցան։

Պատմութեան փիլիսոփայութեան մէջ՝ նորերն շատ աւելի առաջ անցան քան հին սկատմազիբներն։ Արդարեւ՝ զարմանալի չէ որ յոյներն ու հռոմայեցիք կառավարութեան դիտութիւնը, կամ ուրիշ որ և է փորձական զիստութիւն մշակած չլինին, ինչպէս որ մշակուեցան մեր ժամանակները։ Վասն զի ընդհանրապէս փորձաւական դիտութիւնները յառաջադիմութեան վիճակի մէջեն։ Ասոնք լաւ ևս հասկանալի եղան եօթնետասներորդ քան վեշտասաներորդ դարուն մէջ։ Բայց այս անընդհանր կատարելութիւնն, ուսման այս բնական մշակութիւնը չէ միայն պատճառ նոր մատենազիբներու անդաւ դերավանցութեան։ Տարբերութիւնը չէ

Բէ աստիճանի այլ տեսակի տարբերութիւն մ'է : Ոչ միայն նոր սկզբունքներ դանուեցան , այլև նոր կարողութիւններ՝ ըստ երեցթիւն՝ ջղնեցան : Չէ թէ մարդկային խմացականութիւնն մի ժամանակ քիչ յառաջադիմութիւն ըրաւ և արիշ մի ժամանակ շատ հեռու գնաց , այլ մի ժամանակ մնայուն վիճակի մէջ ընկած և մի ուրիշ ժամանակ յառատեւ յառաջացած սկզբի լինի : Ճաշակի և երեակայութեան , ոչի շնորհալի վայելչութեան , համոզման արհետոփ , հասարակային գործոց շքեղութեան կողմէ՝ հիները զէթ մեզի հաւասար էին : Մեզի սկզս ուղիղ կ'բանադատէին անսոնք այնպիսի նիւթերու վրայ որ պարզ առաջցոյ կ'պահանջէին , բայց բարյական գիտութեանց մէջ հազիւ ուրեմն յառաջադիմութիւն մ'ըրին : Քրիստոնի թուականէն առաջ հինգերուրդ զարուն մէջ անցած երիար միջոցին , և անկից եաք՝ հինգերորդ դարաւն՝ դրյան ինչ յառաջադիմութիւն աեղի տնեցաւ : Սոկրատէսի ժամանակէն մինչեւ հիւսիսային արշաւանաց ժամանակ՝ բոլոր փիլիսոփայից զերբնական գիւտելին՝ կարե որութեան կողմէ՝ կարելի չէ բաղդատել Եղիսաբեթ թաղուհւոյն ժամանակէն սկսեալ ամէն յիսուն տարին եղած զիւտերուն հետ : Բնաւ մի ապացոյց չկայ կարծելու որ կառավարութեան , օրէնսդրութեան , և քաղաքական սնանեսութեան սկզբունքն աւելի լաւ հասկրցուած էին Օգոստոս Կեսարայ օրովն քան Պերիկլէսի օրովը : Մեր բնիկ երկրին մէջ՝ վաճառականութեան և իշխանութեան լուրջ գաղտփարներն՝ մի սերունդի կենդանութեան ժամանակ իսկ , ընդ աղօտ նշմարուեր , համարձակօրէն տարածուեր , սկաշտպանուեր , գրութեան վերածուեր և 'ի վերջէ ամէն կուսակցութեան լրջամիտ մարդոց կողմէ ընդունուեր են , օրէնսդրական ժողովներու մէջ իրեւ վկայութիւն յիշուեր , և օրինաց ու գաշնաղրութեանց մէջ տարրացեր են :

Այս փափոխութիւնն ի՞նչ բանի վերադրել սկզար է : Անսարակցութաու մասին տպաղրութեան զիւտին — մի զիւտ որովհոյ միայն ամենու բեր զիւտութիւնը ծաւալեցաւ , այլ ինչպէս որ արդէն գիտեցինք , բանագաատութեան մէջ այնպիսի մի ջշդրածութիւն բերաւ՝ որ անյայտէր էին ժողովրդոց , որոց մէջ աեղեկութիւններն մած մասամբ՝ բերանացի կ'աւանդուէին : Կարծենք թէ նուազ բացայաց բայց աւելի զօշաւոր մի ուրիշ սկամճառ . կար :

ԹԱՂԹԱՑՈՒԹՅՈՒՆ

Սիրեցեալ Արոյը,

Այս Շահնուրի վերջի նամակը բոլորովով մաոցընել տուաւ ինձի ըստ լիքներս, և իմ զրոթեան ամեն նիւթերն ու առարկայք բոլորովին բարձի թողի մնացին. վամն զի Ա. Մամլոյ թղթակիցը շատ լաւ, շատ ճիշտ, շատ արդար դատեր էր աղջային վիճակը, շատ լաւ նկարագրեր էր պատշաճնալորաց և անվաշտոնից յանձնապատճութիւնը, լրակրաց մեծապոյն մասին կարծեցեալ փաստաբանական գերը : Թէ որ ինք պակասութիւն մը ունեցեր էր, ըստ իս հոն էր որ իր հակառակորդներուն քով չէնանցնութեան, առրդիւթեան, խոնի, փափկութեան կայծ նշմարելու յոյս մը մտքէն անցուցեր է, և այս աններելի է իմացականութիւն ունեցող մարդու համար :

Այն, աններելի հ և իցէ բանական մարդու, ինչչափ որ բարձր զրից մէջալ դատի, յուսալթէ առանց սկզբանց մարդիկ, որ պաշտօն են ստանձներ, զրպարտել սաել ճշմարտութիւնը ամեն վայրին իսկաղթիւրել, կրնան թողուլ անարդ շահերն ու կիբերը որոց նորիքած են իրենց սիրսն և հոգին, և դալ միաբանիլ անմնց հետ որ խղճի, բարյականի և սկզբանց կը ծառայեն :

Բայց ասոնք 'ի բայց և հեռու վասարելէն վերջը, այէտք չէ թողուլ առանց խրամելու զանոնք որ բարի կամք և փափար ունին աղջին ծառայելու և օգտակար ըլլալու, և թէ որ պակասութիւն մը ունին հոն է որ ժամանակէն առաջ դորձի կը ձեռնարկեն, փոխանակ սպասելու որ իրենք հասուննան, մողելնին ուռանայ, մօրուքնին թաւանայ, լեզուին ուսմունքը յառաջանայ, ուղեղին արամաբանական կարողութիւնները հաւասարակշռութիւն զանեն, իրենց դրածը՝ կամ աւելի լաւն ըսելու իրենց թարգմանածն իրենք հասկրնան . այն, փոխանակ սպասելու կը զրեն երբ պէտք է ունին և ընթեռնան : Կ'ուղես օրինակը, առ ձեռքի նոր հրատարակութիւն մը Կէլէնք անուանեալ, խմբագրութեամբ Մանուելի Բարոնակ Խմբիւթեան, Տօբթէու Փարիզի բժշկական ճեմարանի :

Իր յառաջաբանէն կը հասկըցուի թէ ոյս պատուական երիտասարդը հասարակաց օղուտը վնտուղներէն մին է, բայց երբ առջի երեսն մէջ և Երջանկութիւնը՝ մարդոյս ամեն բաղձանացն և գործոցը նպատակն է, և ամենն ալ անոր հանելու կ'ընկրկին» կ'ըսէ, սովորական խելքերու անհասկանալի բան մը ըսած ըլլալը յայտնի կ'ընէ, և այնովէս կը թուի թէ ինք ընկրէլ և նիշուիլ իրարու կը խառնէ : Եւ այսպէս իր հանդէսը՝ փոխանակ ազգային օղտին յառաջադիմութեան գործիք մը ըլլալը՝ յետո ընկրկման գործիք մը կը նայ համարուիլ, վասն զի լեզուին դահիճն կը դառնայ . առելի լաւ էր ամեննեին չզրել քան թէ ըսել և Ակաթօքը գՔօո.Փու արշաւելու ասեն» : Անշուշան թէ որ դիտնար թէ Քօո.Փուի վրայ գրուած զդիրը Հայ ականջներու լինչչափ անախորժ, լինչչափ քատմելի է, չը գներ : Կոյնալէս նոյն է Եներուն մէջ Եռուտէ քաղաք՝ փոխանակ Յուգայի Երկիր ըսելու, Սեդրոն զետ փոխանակ Կեդրոնի Հեղեղատ ըսելու, Էֆէզ և Էֆէզիէնք՝ փոխանակ Եփեսոս և Եփեսայիլ ըսելու, մեղի անախորժ և ծանրալուր եկաւ :

Տօքթէու Խթիմեան որ պատմուան վերնազ ըովլ երկայն յօդուած մը դրած էր իւր Ակէէիային մէջ, այս վերցիշեալ անսեղը թիւնքը զրելէն դատ այնպիսի սխալներ կը զրէ, կամ այնպիսի խառնակ և հարեանցի կերպով կը թարգմանէ որ պատմութեան տեղեկութիւն ունեցողը հազիւ թէ քիչ մը բան կը հասկընայ, այն ալ դուշակելով շատ անդամ ։ Երբ Փարիզի մէջ 1846 թուականին 1862 հոդի զլսասուեցան կ'ըսէ, անշուշտ, դու Արոյը, որ Փարիզ 1846ին այս կոտորածը չտեսար, կրնաս Երեակայցելթէ 1793ին պէտք է ընկրկիլ այս կոտորածը զանելու համար : Երիտասարդութիւնը զարմանալի մտածութիւններ ունի . խմբադիր Տօքթէու վերջերը կ'ըսէ . Այս յօդուածնիս կրնայ ըլլալ զգալի գաս մը, միիթարական մը ամեն անոնց որբ ընտանիքի տէր են . . . : Այս վերջի տողերն ալ անհանդուրծելի են, վասն զի իւր յօդուածն ոչ միայն դաս չէ, ոչ միայն միիթարական չէ ընտանիքի տէր Եղողին, այլ զառանցանք մի է ողբերու արժանի . պէտք է ինք զիսանց թէ մեր զաւակները, որ գպրոց կ'երթան, ընդհանուր պատմութեան գաս կ'առնեն, երբ իր յօդուածը կարդան պիտի շփոթին զրողին տղիսութենէն և պիտի չլարենան դուշակել թէ Կարուլոս Կեսար՝ Գայիս Կեսար, Օմառ՝ Էօմէր, Թամիուլան՝ Լէնկթիւմուր, Թիու Տիւրոս, Մետք թագաւոր Սիւլիւմ՝ Պարսից թագաւոր Կիւրոս պիտի ըլլան . պիտի չլարենան որոշել որ Ակիւսի և Օդոսոս որ հեղինակը մերթ այսպէս և մերթ այսպէս կը զրէ) մի և նոյն

անձն է : Զգրուցէ ոք մեզի՝ ի պատասխան թէ գաղղիականին հետեւ ւաթեամբ յատուկ անուններն այդպիս անփափոխ պահեն արգարանալի է , հչ , թէ որ այդ անունները 1,200-1,500 տարի առաջ մեր հայրերը գործածած չըլլային և նոր անուններ ըլլային , այդպիսի պատասխան մը կարելի էր լսելի ըլլալ . բայց այնչափ գրութիւնք , Աստուածաշունչի թարգմանութիւն և Խորենացիի աշխարհազիր՝ այդպիսի տառագարձութիւն մը անկարելի կ'ընեն : Եսկ հեղինակին վերաշարանը , տիեզերական պատմութեան տեսութեան մը վերջը , ուր երեւելի մարդիկ և դէպի յիշելն վերջը «մեր ազգն ալ իր ազգասէրներն ունեցած է » ըսելով , Յարութիւն Սըլվաճեանի՛ Մէլլուկի խմբագրին վարուց պատմագրութիւնը խոստանալը՝ մեզի զարմանք պատճառուց , վամն զի Յ. Նըլվաճեան մեր բարեկամն էր , լսու և զեղեցիկ յատկութիւններ ունէր , իր կենագրութիւնը լսել մեզի շատ հաճելի է , բայց գժուարին կ'երեւի ընդհանուր պատմութեան հսկայական արկածից և անձանց քով զնա տեղաւորել , և այնպէս կարծենք թէ Սըլվաճեան ինք թէ որ հիմա գլուխը զերեզմանէն վեր առնէր , Տօք թէօռ Խւթիւնեանին ձեռքէն կը բռնէր կ'արդիւր իր յիշատակութիւնը ըսելն ընելէն դոնէ առ ժամանակ մի , մինչեւ որ Կէլէկային հեղինակը Հայ լեզուն սովորէր , և այդ պատմական տեսութիւնը մօռցուէր , որսպէս զի Կեսարիներու , Աղէքսանդրներու , Աէնկթիմուրներու , Կափօլէօններու , Արիստոտէլներու մեծամեծ ստուերներու մէջիր պղտի անձը շկրասուէր :

Սըլվաճեանին անձն արհամարհէլ մեր վերի տողերն ալ կըցուցընեն թէ մեր մտքէն չանչնիր , մանաւանդ թէ չենք ալ մոռնար , երբեմն Վարյալիդ գրութիւնն Եղումին վրայ՝ ուր սրասեսութեամբ կը նշմարէիր թէ Եղիպատոսի հարուածներուն նման , պիծակներու տարափ մը Հայ ազգին զլուխը կ'ըսպաւնար : Մեղուէն վերջը պիծակ :

Սըլվաճեան այն երիտասարդներէն էր աղցին մէջ , որ բաւական տաղանդ զյալով յինքն , կ'ուլէր սըմնալ և բարձրանալ , և կարծէր թէ կամենալ կարենալ կը նշանակէ . ուստի իր մոտառբական տաղանդը հարստացընելն որ աւելի դիւրին էր , քսակն ուղեց հարստացընել , և այս սոսկալի պատերազմին մէջ զսչ ընկաւ : Երբ ինք՝ Մէլլուն քանի մը տարի երեսի վրայ կը թողողւր ածուխի , աղիսի , հանքի ետեւ սրտաելով՝ լեռները չափելով , արևուն շողին , ձիւնին , սառին հետ կ'ընկնէր կ'երնէր , օրասպահիկը հազիւ հայթայթելով , յոյսն իրեն ներցուկ ունենալով , անդին հետզետէ իրեն խմբազրական դափնիները

Դախաճանորդներ կը ծնէին, և երբ ժանդոտած զրիչը ձեռք առաւ և ասսրարել նետուեցաւ, գաշտը բոլորավին փոխուած զտաւ . Արայրի նախատեսեալ պիծակիները կը վկասային, կը բղային, և ինք զարմանքով կը տեսներ՝ թէ ինչպէս ինք երբեմն հռչակաւորն իր խայթոցով՝ զրեթէ անտարբեր եղած էր ժաղավրդեան : Այս ատեն իրեն յիշեցը նողներ եղած անցեալը՝ ուր իւր բարեկամաց խորհուրդներն զանց առանելով յախուռն յարձակումներ ընելն սովորութիւն ըրած էր, թեթե դատմունքովլբարի անուններ արատաւորել չէր զդուշացեր : Քանի անդամայն ատեն զանձն ՚ի չքմեղս հանելով, խեթք երիտասարդը բայց ես, կ'ըսէր, երբէք իմ զրիչս կաշառ քող չեմ աղտատած ասոնց պէս . երբէք իմհամունաս դէմարդաբութիւնը չեմվիրաւորած . կարելի է սխալած ըլլամ՝ կը խոստուլանիմ, բայց ապին օլախն դէմ ջշմարտութիւնը չեմ խեղթիւրած և խղճմանքս մաքուր է» : Բայց այս այսպէս ըլլալուն հաւատալու, կարելի է արդեօք, պէտք է արդեօք մարդ՝ երբ ձեռքը հաստատուն ապացոյց չունի, թե թեւ խորհրդածութեամբը և երեւութէն դատելովլառնու զրիչը, զնք մը որ ոլաք մ'է այսօր, մուռձ մի է վաղը, իմի խայթոց մ'է միւս օր, կործանէ սկառի մը, վիրաւորէ սիրտ մը, թունաւորէ համբաւ մը, և այսնք առմանքն այսալիսի անհոգ զուարթութեամբ որ կրնայ մոռցընելտալ վայրինան մը արդարութիւնը նաև մարդուն որ խիզճ ունի : Առնոնք արդարութեան նմարը ձեռքերնիս, կենանք երկու զերեզմանի մէջ ՚ի սահմանադլուխ յատիտենական կենաց, հսն ուր կուասիցութիւնը կը միերջանան, կիբուրը կ'անհետանան, և գառնանք տեսնենք Սըվաճեան՝ որ իւր Մեղաքին խայթոցովլզինեալ կը յարձակի ընդդէմ տպիտութեան, ընդդէմ բռնաւորութեան, ընդդէմ նախապաշարմանց, ընդդէմ ասուրինաւորութեան, ընդդէմ անիրաւութեան, և նվազ դիմացը կը զմնէ, կաթողիկոս, պատրիարք, ամիրայ, առաջնորդ, ժողովրդապետ, եւ կեղեցական և աշխարհական, բան մը չինայեր, կը կոխէ կ'անցնի, չէ որ իւր նորատակին ալիտի դիմէ . և հոն իւր ճամբուն վբայ կը զանէ եկեղեցական մը, վարդապետ մը, կրօնական ժողովոյ անդամ մը, որ լուռ մօնջն կեցած կը զիաէ ոյս երիտասարդութեան դահավէք ընթացքը, որուն՝ ոչ ասարկը, ոչ դիբբը, ոչ բնութեան լրջութիւնն և ոչ ալեաց փորձառութիւնը չեն ներեր ընթացակից ըլլալ, և ահա կրիւր կ'ըսկի, երիտասարդ խմբաղիրը կ'իջնէ հարուած հարուածի վրայ կը խոցուէ, կը վիրաւորէ ծեր եկեղեցականն իւր համբաւոյն, իւր առարկինութեան, իւր ուղղութեան և իւր անկողմնաւ

սիրութեան մէջ, ցոյցընելով զանի դաւագիր և թշնամի աղջային յառաջադիմութեան։ Բայց զիտելու բանը հմտ է որ կոխուը միակողմանի է, որութեան Աթեթեան Յայշաննէս վարդապետ, վասն զի պէտք է իւր անունը առալ, որ բիրախ մի է թշնամի հարուածոյ, լուռ անզգայ արձան ոչ կը խօսի, ոչ կը դրէ և ոչ կը պատասխանէ, ոչ ժաղսվրդոց օտարանալը, Երիտասարդաց ատելութիւնը՝ իր անձին դէմ ալինարկութիւնքը զինքը չեն խախաեր որ բան մը, բառ մը արտասանէ։ Եւ այս մարդկը՝ որ իբրև յառաջադիմութեան թշնամի կը դատափետուէր, մէշ կը չէրյիշեր, չէր զբոցեր թէ երբեմն արքարութեան համար, ամիւրացի մը վրէժինդրութեան զործիք ըլլալ չուզելուն համար, ինք մի միայնակ ստորագրութիւնը զլանալով՝ զրոյցելուն համար թէ՝ «Չեմ կրնար դատապարտութեան վճիռ մը ստորագրել առանց ամրաստանեալ մը մտիկ ընելու» յանձնառու եղած էր աքսոր երթալ։ ոչ ոք չէր զիտած թէ մեծամեծ անձանց հրատիրանաց և քամահանաց նոյն անտարբերութեամբ կը տանէր. ոչ ոք չէր տեսած թէ իւր սրբազն պաշտօնին մէջ անդուլե հաստատուն եռանդ միշտ պահելով և ինք զինքին խիստ ըլլալովիր ստորակարգելոց սպակասութեանց միշտներող և զամյառու կ'ըլլար, ոչ ոք չէրնամարած թէ պարզ, համեստ և պարկեշտ կենաց մէջ ոչ հարստութեամբ, ոչ ճողութեամի, ոչ աստիճանի բարձրութեամբ չէր հետամաներ այս մարդը, և որ աւելի զարմանալին է՝ հետամոլց ալ անմեղագիր և ներողամիտ կ'ըլլար. ինչու երկայնաբանենք, 90^լ անցած իւր բոլոր հարստութիւնը Հայերէն լեզուի զրեթէ ամբողջգրաստուն մը միայն ունենալն եղեր էր և եղբօրորդի մը, որոց մէկը կրակը լափեց մախիր ըրաւ, միւսը մահը յափշտակեց հող ըրաւ. իսեղք ալեւորը, որ անորոտունջ համերերէր էր ամեն հարտածներու, այս երկու վերջին հարուածոյ թէպէտ դարձեալ անարտունջ համբերեց և Աստուածային նախախնամութեան սիրուլ երկրագեց, բայց ալ դլուխը տկարացաւ և մահուանէն տարի մը առաջ զառամեցաւ։ Իւր փառաց օրն իւր թաղման օրն եղաւ և իւր զերեղմանն այն եկեղեցին՝ ուր ինք այնչափ տարիներ ՚ի խորոց սրտէ կը հնչեցրնէր ՚ի շինութիւն հաւատացելոց սրբազն բառերը՝ «Տէր, սիրեցի զվայելուն թիւն տան քոյ»։ Երիտասարդ եպիսկոպոս մը ծեր եպիսկոպոսին դամբանականը խօսեցաւ Քուղկունձու իսի եկեղեցւոյն մէջ, նորա աղքատութիւնը ներբողեց, ինչպէս տարին չլրացած ուրիշ երիտասարդ եպիսկոպոս մը Խառն զիւղ, երիտասարդ Սրվաճեանին զաղաղին վրայ նոյն աղքատութեան վիճակի սիրաի ցուցընէր, իւրեւ արիտուր անսնց որ աղզին դրական զիւ-

նուոր կը գառնան և անոր բարոյական պատնեշներուն վրայ կը մեռնին երիտասարդք : Այս երկու զերեզմանին մէջ կեցած լ'նչ կը մնայ զրոյել մտածող մարդու , եթէ ոչ Լամարթինի խորհրդածութիւնը . «Թէ որ հակառակորդք զիրար խորացնին ձանչէն , հրքան պատառմոնք , հրաւափ թշնամութիւնը և քանի կոտորածք պակաս կ'ըլլային աշխարհիս վրայ :»

Բայց Սըլվաճեանին կենաց վրայ խորհրդածութիւնն ուր կը տանի զմեր , թէ որ լաւ քննենք : Ազգին երիտասարդութիւնը մեր աչայ տռաջե կու դայ իւր գաստիարակութէ ամք , իւր տենչանօք , իւր փառասիրութեամք , իւր համնելու փափաքանօք . և ի՞նչչափ խորտուբորտ է ձամբան , ի՞նչչափ տաճանելի ասպարեզը : Եւ քանիք են որ կը հասնին բան մը ըլլալու , և ի՞նչչափ քիչ են արհետառորմերը : Ամենուն քովանցադ տենչ մը կայ ոսկեց , և ի՞նչչափ քիչ ոսկին այս տենչենաց ամբաւութեամն առջեւ . և նմէ այն հաղուալիւտ անձն որ այդ հրաշադործ մետաղին զեղեցիկ աշքերուն զպարնոի , հմէ որ իւր բաղդին չափաւորութեամք շատանայ . շնոր քիչ : Եւ ասոր համար է որ մենք սկսանք ձանչցուիլ , և զիսենք ալ թէ որչափ գանդատ ըրած ենք որ անտարբեր է աշխարհ Հայ անուան համար , աշա յանկարծ կը տեսնենք որ այդ անտարբերութիւնը մոռնալով աչքը կը գարձնէ մեր վըրայ ալ կը նայի զարմանքով և Աքհենէն անունը կը լսուի . և հեռազիրը թաղաւորմերու , իշխաններու , մարտաջախաններու անուններու հետ յանկարծ կը հնչեցընէ Հայ անուն մալ . մի հարցըներ թէ ի՞նչ պարագայի մէջ , չք որ Տէր Մարզարեանցի և Պալէնի դատապարտութեանց վճիռը նոյն թելերու վրայէն քալելսլ մեղի հասան :

Այսպիսի նիւթի վրայ խօսիլ , ազգին բարոյական վիճակին վրայ խօսիլ է , Արցոյ . բարոյական բսելուս Ստոյիկեանց բարոյականը չեմ իմանար . վասն զի աշխարհքս նոցա անցեալին մէջչէ , այսօրուան աշխարհքիս դիւցազրունքը Փոկիֆոններ չեն իրենց զրոյ լեակիներուն և առաքինութեանց մէջ փաթթուած , այլ ժամանակիս դիւցազրունքն անոնիք են որ կրնան իրենց պերճանաց և շքեղութեանց մէջ ամեն աչք շլացնել : Զէ , այդպիս չկենար ըմբռնել ժամանակս , ուր յափշտակողք և երդմանանցք , զրկողք և դաւաճանք , զերեզմանէն անդին նաև Ասոտածային սեղաններու առջեւ շողոքորթ բուրվառներ կը դանեն . ժամանակս գաբնիներն անոնց համար են որ կրնան դիւթել ողորմելի մտքեր , պալասաններ բնակիլ , կառքերու շրջապայիլ , զբգանք և փառք վայել . մի հալացըներ թէ ի՞նչ միջոցներով , միջոց արդար է երբ կը յաջու

ու յիմնը, որ այդպիսի նիւթի վրայ խնդիր կը յարուցանէ : Ես ծեր բարեկամ մը ունիմ, զերաղոյն անձ մը, որ իւր սիրան աղջին տուած՝ ձեռքէն եկածն ոչ երեք խնայած է անոր համար . և հիմա տարինեւ բէն աւելի տկարութիւն իւր վրայ ծանրացած՝ քաշուած զիւղին մէկը կը նստի իւր անկողինը շրջապատեալ ուսումնական դրէբով : Այս բարեկամն, որ սրամտութեան պարզութիւնն ունի, կ'ըսէք երբեմն . «Կը ցաւիմմեր աղջին վրայ որ երեելի եղենաւոր անդամ չունի . ես կ'ուզէի լրադրաց մէջ երբեմն կարդալ Հայ անուն մը որ ուժով հնչէ օսուր ականջաց, և տիեզերական ուշագրութիւն դրաւէ . նայեցէք սա մեզ զի դրացի և ժամանակակից աղջն ի՞նչ յաջողութիւն, ի՞նչ արթնութիւն ունի ամեն բանի մէջ և զեռ շատ Երոստրաներ պիտի ծնանի աշխարհքին : Թէ որ մօտերս կարենամ զինքը տեմնել՝ պիտի ըսեմ իւրեն թէ միկթարուի ; վասն զի սկսանք յառուջաղիմն և իւր փափաքանաց ծայրը նշմարուեցաւ : Բաւական ժամանակ կայ քանի մը երիտասարդաց մէջ զանուեցայ օր մը, որ յԵւրոպական և յազգային լրադրաց առնլով, Աստանիկ Տէր Մարզաբեանցի մը ուսումնական հաճարը, անզուգական յառաջաղիմն թիւն և հաղուստիւտ առատաձեռնութիւնը լիաբերուն կը զովէին, և իմ իրենց համամիտ և ձայնակից չըլլալս տղզոչութեան աւելի կը նշմարէի, և իրօք ալ երիտասարդութիւնը զարմանալի է և աղնուասիրտ իւր զառանցանաց մէջն ալ, և ծերերը որ անախործ են երիտասարդութեան շատ պատճաներու համար՝ անախործ են մանաւանդ իրենց եռանդապին թոփիչներուն արդելք ըլլալուն համար : Աւստի նոյն պարագաներու մէջ կը զմնուէի ես ալ նաև այդ աշխոյդ խմբակին մէջ : Երիտասարդները կը տեսնէին Հայ Աանցի երիտասարդ մը կոմինենի գպրոցի անզու զական քաջ աշակերտ մը, ոսկի միտալ ՚ի կուրծու վարձատրեալ, Գաղղլից երկրադորձական ճեմաբանին մէջ ակէս մեծ մարդու մը աթոռը բարձրացեալ, Տրիւէն որ Լիւիսի պէս քաղաքաղէտ և ուսումնական անձէ մը հովանաւորեալ, Գաղղլից էն լուրջ օրադրին Տէպայի սիւնակներն իրեն բացուած՝ իւր առաստաձեռն բարեգործութիւնն և խոր պերձութեանց նշոյլն ամեն աչքեր շլացուցեալ, և աղդային լրադիրք զըեթէ առ հասարակ իւրեն ծափ կը զարնէին և Լուսաւորիչ մը ծազեցաւ կ'ըսէին միաբերան . տիսուր էր աեմնել ծեր մը որ կը յամառէր աչքերը զոյելու՝ ուրանալու համար Լուսաւորիչը, կասկածելի համարելու համար բարեկործութիւնն և պերձութեանց աղըիրը . անհամ, անլի և սովորական զանելու համար Տէպայի մէջի դրած յօդուածները, քսամնելի համա-

րելու համար ստորին կայսերու թեան պաշտօնէի մը հովանաս որութիւնը , կուրութեան հետեանք համարելու համար Նիկոփիկ աթոռին դրառումը , ունի միտուն և Կոխնենի աշակերտաց առաջնութիւնը , վասն զի Անցի իշխանազուն մը իւր Տոխութեամբ Փարիզ ալշեցր նող ամհաւատալի հրաշք մ'էր : — Թէպէտ այս խօսակցութենէս վեջը ես երիտասարդաց խումբէն բաժնուեցայ և իրենք ինձի աստիլ գէմ չտուին և զգայած բոլոր տժդոհութիւնն չյայտնեցին , բայց ես ինձմէ գժզոհ ելայ , վասն զի յայտնի աեսայ թէ երիտասարդութիւնը կ'երեւակայեր թէ իւր պատկիներուն էն զեղեցիկ վարդը կը խեմ յաջաղլուս ձեռքով . ուստի լոել երգութնայս : — Բայց վերջապէս եկաւ հասաւ օրը և համբաւը տարածեցաւ թէ Տէր Մարդարեանց Պօլիս էր , և ինչպէս ես նոյնպէս շատերը իրիկուն մը իրենց դրասեղանին վրայ Գաղղիաբէն ամսաթերթ մը դասան Ռստանիկի կենդանալրով և կենսադրութեամբ , ուրյայսնի էր թէ դիւցապնն ոչ իւր կերպարանկով այլ զիմանկով կը ներկայանար աշխարհի : Ալ անկից վերջը՝ աջէն ձախէն կը լուուէր թէ պանչելի էակը ինչոր բարձր երեւելի անձ կար դուռն անդամ մը կը բաղխէր և ամենէն սրամիտներուն անդամ հանելու մի ըլլալ կը յաջողէր՝ զոնէ առաջին տեսութեան մը մէջ : Թէպէտ երիտասարդ , թէպէտ ոչ մեծ հանձար մը նաև իւր տեսակին մէջ , բայց տեսած ըլլալով՝ ի մօտոյ Գաղղիոյ բարձր ընկերութիւնը որ դահին ջուրաջը կը շլըրտէր , խելաշաւ եղած էր թէ միշտ ամենէն մեծ էշերը չեն որ վարի ախոռները կը բնակին , ուստի անոր համարալ իր զարմանայի դիւսան առաջկը քշէր թէ ինչպէս ինք առանց մէջ աշխարհութեանց կրաքանչին երկիր ճշ ճնդարձակութեամբ հարստութեանց պարունակութայն էլլա ժամանակին մէջ , նոյնպէս կ'երեւել թէ լաւ իմացեր էր նաև որ ամեն բան կը նայ ըլլալ մարդ մը արեւելք , մինչեւ աերութեան նախարար մը , բայց ոչ երկրագործ , ուստի քանի մը ամիս թափառեցաւ և ամեն տեղ զուարթ և ծիծաղերես մեծամներ դատաւ , բայց ոչ ոք չըստ իրեն թէ որալիւեաւ ՚ի Գաղղիա զենք Լիկոփիկի աթոռը բազմեցուին , անցիր հոս ալ Աղաթանի աթոռը նատէ : Ուստի արդէն սկսեր էր իւր գժզոհութիւնը յայտնել և ըսել թէ Պօլիս իմ վարկու Տանչելու արժամնի մարդ չկայ : Յանկարծ Փարիզից ախտավաճառ մը առջն ելաւ , չին ծանօթ մը , իւր հարստութեանց , իւր զիտութեանց , իւր միասնին , իւր ուսումնական յառաջագիտութեան աղբիւրներուն մէկը , պարտատէր մը որ հաղարներով Փրանք կ'ուղէր և բուն Հընայ որդի Հընէի եւ լեր նեղութիւն յանձն առեր՝ Պօլիս եկեր և շուտ մը իմացեր էր թէ

Աստանիկ ոչ իշխանաղուն էր, ոչ մեծամեծ հաղերու՝ ոչ հանքերու՝ ոչ
անտառներու տէր, այլ սպարզ խարերոյ մը որ յաջողեր էր Փարփղեւ
Լոնտոն ստակով հարուստ և մտքով աղքատ մարդիկ իւր ցանցին մէջ
ձգելու (որոց մէջ իր անձն ալ խնարհաբար կը դասէր այս Սբրահա-
մու հարազատ որդին) կաշառելու իւր վարժապետերն որ իրեն դուրո-
ցի առաջնութեան մղցանակները շնորհեր էին, բնակելու համար փա-
ռաւոր սպանդով մը, ունենալու համար կառ քեր և ձիեր և վերջապէս
այն ամեն բան որոցմով մարդու մարդու կարդ կ'անցնի և դռներ կը
զանէ մանելու համար այն ընկերութեանց մէջ ուր սպատիւ և պաշտ-
պանութիւն խօսքի մը, ծիծաղի մը, կատակի մը փոխարէն կը շնոր-
հուին շատ անդամ՝ երբ անոնցմէ գուրս արդիւնք, ճգունք և արժա-
նիք կը հալին և կը մաշին անփառունակ ։ Ես աւելորդ կը համարիմ
ասկից անզին շարունակել պատմութիւն մը ուր երկու զիւցազոնք նէն-
դութեան և խարդաւանաց իրարու հետ կը մրցին և վերջապէս յաղ-
թութիւնը կը տանի Խորայէլի որդին և Ոստանիկ հինգ՝ կամ աւելի
Ճիշտ խօսելով եօթն տարուան բանափ կը դատապարտի ։ Միայն թէ՝
Ճշմարիտը զրոյցած ըլլալու համար պէտք է ճանչենք, որ դատաս-
տանին ընթացքէն յայտնի կ'երեւ որ Ճրեան ալ արդար պարտապա-
հանջ մը չէ, այլ իւր բալոր հնարապիսութեամբ իւր արծաթը բազ-
մապատկած կ'երեսի, բայց օրէնքն իրեն համար սպատիժ չունի «զի ի-
մասսութեամբ արարծ մնտեան անիրաւութեան ։ Բայց ժամանակիս
բարյականին համար ի՞նչ խրատ կայ Հայ երիտասարդին իւր դատա-
պարտութենէն ։ Ոստանիկ իւր դատապարտութեան վճիռը լսելուն,
իւր հանդարաւութիւնն և կորովը կը կորալնցընէ, զետինը կը թաւալի
և աղի արցունքներ կը թափի ։ . . . ինձի աւելի ախորժելի կ'ըլլար
թէ որ այդ տկարութեան օրինակը չտար, և դատաստանին փոթորիկէն
վերջը, իր բանտին գռնէն ներս մասնելէն վերջը՝ առանձնութեան մէջ
սկսէր խոկալ և խորհրդածել, թէ ի՞նչո՞ւ ողիղ և արահետ ճամբան
կցած ժամանակ այնչափ նեղութեամբ, այնչափ տաջանքով օձապոյտ
ճամբաներէն և առապարներէն սրացեր էր համանելու համար զահա-
վէժ այդ խորխորատը ։ Թերեւ մէկ միսիթարութիւն մը կայ այդ եղեր-
երդութեան մէջ խերջ տղուն համար, որ եթէ իբրև միջոց ալդործա-
ծուած ըլլայ, դարձեալ խոջին թեթևութիւն է, որբերու՝ աղքատնե-
րու՝ խեղջերու ըրած օդնութիւնը ։

Նցյն միսիթարութիւնն աւելոքը կրնայ ունենալ ուրիշ երիտասարդ
մը որ երբէք յանցանաց ծանրութեամբ չկրնար բազգատուիլ Վանդի ե-

բիտասարդին հետ , վասն զի հոս ամեն բարելաւութիւն իւր կողմը կը քանուի , և ամեն պարագայ զինքր թէ որ չկրնար բոլորովին արդարացնել շատ քիչ գատապարտելի կ'ընէ : Մ . Սիմոնովիչի վրայ է խօսքս : Օսմանեան Պանքայի մէջ եօթն ոսկի ամսականով երիտասարդ մը , իննառնվեց հաղար ոսկոյ սղատասխանատութեան տակ կը հեծէ . այս ահաղին դումարը խարդաւանեալ և այս քսան հինդ տաբեկան պատանին հինդ տարի այս պանքայի տեսուչներուն վերակացուներուն քթին տակ կրցեր է իւր գերը խաղալ անոնց աչքերը կազել անոնց միտքը կուրացնել և այս ստակինքն իւր ծոցը լեցնել և անոնք քնացեր են ապուշ գալաձեր են չեն տեսեր՝ չեն լսեր՝ չեն իմացեր . յիբաւի թէ որ այս տղուն քով յանցանք կայ՝ վստահութեան մասնութիւն կայ . ի՞նչ կայ անոնց ապշութեան համար որ իրենց պաշտօնն այդ կերպով են կատարեր . թէ որ բանան իւր գաւնութեամբ՝ իւր միայնութեամբ՝ իւր գժնդակութեամբ վերջապէս իւր անունով այդ երիտասարդը կը յափշտակէ , որ տարին 84 ոսկի կ'առնուր , օրէնքն ի՞նչ ունի գրուցելիք անոնց համար , որ հաղարներովուսկի կ'առնութիւն տարին , այդպիսի անհոգ պահանութեան համար : Կ'երևի թէ օրէնքներուն կարողութիւնն ամիսը 6-7 ոսկի շահողներու վրայ մայսն ազդեցութիւն ունին . երանի անոնց որոց համար օրէնք չկայ : Բայց հաղար և ճշմարի՛տ երանի այն երիտասարդաց որ կրնան վստահութեան հաւասարի՛մ մնալ , կարօտութեան փորձանաց տոկալ , աղքատութեան նախասանաց տանիկէ հարստութեան ոտնհարութեանց համերելերը իրենց անկարելի կ'ըլլայ արդարութեամբ և աշխատութեամբ հարստանալ : Բայց յայտնի է թէ Սկիլավ Սիմոնովիչ հարստութեան արժանի երիտասարդ մ'է եղած , վասն զի ձեռքն անցած ոսկիներն ոչ թէ միայն իւր զուարձութեանց և պերձանաց՝ այլ նաև չքաւորին՝ դպրոցի՝ թատրոնի օյնութեան գործածեր է . և հիմա տիմուր բանտին հիւանդութեան և սուզերու մէջ՝ իւր ըրած բարերարութիւնքը աղտի միիթարութիւն մը կրնան մատակարարել . մանաւանդ երբ հասարակաց կարծիքն այս պատի յանցաւորին շուքին տակ իւր մեծամեծները կը նշմարէ և կը շափէ : Դեռ այսօր ձեռքս կը հասնի գործանական քերականութիւն Գուանսարէն Երզուի Անի ոճով երկասիրութեամբ Թ. Թէրզեանի . հեղինակը մեծարանաց և սիրոյ տղերձ մը ունի ճակատը առ Մկրտիչ էֆէնտի Սիմոնովիչ որ զրքին տպագրութեան նպատեր է : Քերականութիւնը հաւանական է թէ շատ տպագրութիւններ ունենայ . վասն զի հեղինակն այն հաղուադիւտ երիտասարդներէն է որ սրամուռ

Թիւնն աշխատութեան ընկեր ըրած ժամանակի արժէքը կը ճանչեն և իրենց գրչին վարկն օր աւուր կը բարձրացընեն : Բայց մեզի փափաքելի էր որ այս ուղերձին մէջ զանի մը փոքրիկ փոփոխութիւններ ընէր . վասն զի ուղերձը փիլիսոփայք պիտի չկարդան մրայն , այլ փոքրիկ տղայք մանաւանդ : Աւրեմն անաեղի ուէտք է ըլլայ յոբդոլն անոնց փոքրիկ աղջ՝ որբ բարերարին օրինակին հետևելու կը հրաւիրուն : Յանցանաց փուշերու մէջ ծաղկիներ ցանել կ'երեսի թէ այս երիտասարդութեան փառափրութիւնն է . բայց մենք դարձեալ կը կրկնենք , աւելի լաւ կ'ընէին աշխարհքիս մէջ՝ ուր հարստութիւնը շատ քիչ երաշանկութիւն կը բերէ՝ խարդախութեան և խաբէութեան մէջ զանի փնտուելու տեղ երթային անցնելին ծովեր և անծանօթ դօմիներ ուր երբեմն իրենց հայրերը կ'երթան եղեք բաղդ փնտուելու Հնդկաստան և Ռվիանիա , հոն աւելի արձակ երկիններ մաքառելով և տաժանելով ձեռք ձգէին այն հարստութիւնն որ թէ իրենց անձանց և թէ իրենց ընտանեաց և թէ իրենց ազգին օգուտ՝ հանդիս և սպատիւ բերէին :

Անցեալին վրայ խօսեցանք , երիտասարդաց թողինք ներկայն : Ուր էր թէ նոքա աղատ համարձակ բարին դորձելու՝ յառաջ դիմելու աշխատէին , և ոչ թէ անպիտան տղոյ պէս այսօր պաշտածնին վաղը խորտակէին բզրքտէին և աղբիւմներու մէջ քաշկրտէին , չըլլալու համար խաղալիկ իրենք ալ ողբքմելի բանսարկուներու : Երանի թէ մեր այս դուշակութիւնը սուտ ըլլար և տեմնէնիք ապագային մէջ բարեկարգութիւն և յառաջաղիմութիւն , և արդար մը ոտնակուս նով պիտի յիշէ՝ առաքինութիւն մը ոտնհար նով անտես պիտի չառնէ : Ուսափ այս սողբքը թող մնան՝ թող մնոցուն և երանի թէ ոչ ոք յիշելու պէտք ունենայ :

Բայց կան խնդիրներ որմնք չուեմնել յանցանք Է՝ մանաւանդ երբ սխալ սկզբունքներ օրինաց դիբքերուն մէջ կը դրոշմնն , երբ երեափոխանութեան առաջին պաշտօնեայն արդարութեան և Ճշմարտութեան կշուը կը կորսընցընէ , երբ երեսփոխանի մը անձն ու ձայնն արհամարհէլի կ'ըլլան , երբ ՚ի բարձրագոյն իշխանութենէ առանց դատաստանի լրադրաց վերնալուն և պատուհասին ազգային վարչութիւնը սկզբնապահառ կը համարուի , երբ իմաստուն և բազմահմուտ Պատրիարքի մը օրով յանձն նախորդ Պատրիարքի մը առաքինութիւնը կը զրաբառուի և կը քարկօնուի բայց Պատրիարքի մը անձէն արժանիրէն , իւր կարողութենէն վեր բան ինդրել յանցանք է , ինչ պէս յանցաւոր են յանցանօք նոքա որ զնորիմեան յանցաւոր համարեցան :

որովհետեւ չէր դիտեր մատակարարել . այսպէս ալ արդար ըլլալու համար պէտք է զբոցել Ներակ ս սրբազն ի՞նչ որ կրյաւ այն ըրաւ . ի՞նչ որ կրնայ այն կ'ընէ . գիմեց անոնց որ աաղակութիւն կ'իմանային ոչ թէ միայն ազգային գործերէ՝ այլ նաև անոնց որ զզուիլ կ'ըլլային անոնց վիճակին համար . թէ որ զմանս կրյաւ մօտեցընել ապային օդակին , բայց ի՞նչ կրնար ընել անոնց որ նողկանք կը յայտնէին և կ'ըզ զային իրաւամբ : Այն , արդար ըլլալու համար պէտք է խոստուլանիլ որ յանձն առաւ խոնարհեցաւ և անկարելին նաև փորձեց , սեղսնի մը վրայ միացուց մատեցուց ներհակները , ջանաց շրթունքներ՝ որ իրարութուք ու մուր տեղալ սովրած էին համբոյրներով զուղելու սերուել , և թէ որ անսնք դարձեալ իրենց հին սովորութեանց դարձին միթէ ի՞ն էր յանցանիք : Ուտք է դարձեալ յիշելոր ազգային դանձին վիճակին դարման տանիլ ջանաց , և թէ որ անսնք որ կրնային օդնելեա քաշուեցան , ինք ի՞նչ կրնար ընել : Կը յիշենք նաև որ օր մը իւր նախորդին հիտ կրօնական ժողովին գունէն ներս մասաւ , և այն օրն իմացաւ թէ հօն ի՞նչ չափ գառնացեալ ողիներ կրյին ընդդէմ այն անձին որ իւր կամօք իջեր էր աթուէն և թէ անոր ուղղութիւնը պաշտամնելու պարտիել իւր ժողովրդականութիւնը վտանգել էր : Կը յիշենք նաև իւր խոհեմութիւնը , որ նոյն ժողովքին զործունէութեան և անդրասահման ձեռներէցութեան անդամշափ գնելամինելին չփորձեց : Մենք պահանջող չենք ըլլար , իւր արձանիքն և վարձը կը ճամաչենք , և կ'ըսպասենք և կը փափարինք որ դժուար պաշտօնը կարենայ յօդուտ ազդին երկայն տարիներ վարել առանց իւր առողջութեան մնաս հասցնելու . վամն զի յօդուտ ազդին վարել բարին գործել կը նշանակէ : Խոկ թէ որ մինչ 'ի խոր ծերութիւն խոհեմութեամբ և զդուշութեամբ զմնէ հնարքն այս ազգին զեկը վարելու , ոչ թէ միայն իր գարուն առաջին քատարագէտ և իւմաստունը զինքը պիտի համարինք , այլ մեծն 'ի հերօէսս , և անոր համար ալկը փափարինք , որ չներէ զրայարտութեան և լրբութեան իր օրուլ բարձր 'ի զլուխ համարիսանալ , վասն զի բարոյական իշխանութեանց զլուկք այնչափ անարատ պէտք է ըլլան որ կասկածի հետք անդամշափ չէ նշանարի իրենց վարչութեան վրայ , ասով կրնան ճշմարիտ ժողովրդականութիւնը կենդանի պահել յանձինս : Ներսէսի կատարելութեամբք ճոխայեալ շատ քիչեր բազմեր են պատրիարքական աթուին վրայ 400 աարուան միջոյին մէջ , դիտութիւն , համեստութիւն , պեղձախօսութիւն , քահանայական վայելչութիւն կը փայլին իւր վրայ , յուսալի է որ այս կատարելութիւնը յանձին սանձահարել

այն ապերասանութիւնը , որ ծիրակ բանսարկութեան և զանխուլ փառաւ սիրութեան որ այդ գահաւն կը ձգտի : Թողարկք այս ինդիբը և ես վերջացընեմ դրութիւնս , վասն զի երկայն եղաւ , մանաւանդ որ հիմա շատ բան կայ քաղքիս մէջ Հայոյ մը հետաքրքրութեան : Կուազածու զուսանաց Հայ խումբ մը Պօլիս սկսելով հիմա Բերա ամենուն ուշադրութիւնը կը գրանէ . երած շուռութեան հեղինակը Հայ մի է , հեղինակը՝ առաջին գերասանութին և գերասանը ծափահարութեամբ և զովաւթեամբ կը պերճանան , և Պօլսոյ այսօրուան գեղարտեստից պարագ լուխք Այլազգվաքի պատկերահան և Պալեան Ճարտարապետ ծափահարաց պարագ լուխք կը հոչակուին : Աը լսեմ թէ Օրթադիւղ Պ. Երիցեան Բարեսէր ընկերութեան թատրոնը բանախօսութիւն մը պիտի ընէ Հայաստանի վրայ , կարելի չէ , երբ աիկին-Երիցեան լի հիմունթեամբ լուրջ զիքը մը կը հանէ , իւր ամուսինը հարեանցի բառնախօսութիւն մ'ընէ : Արգէն զիտելու արժանի է որ Ռոտսիոյ Հայք լուրջը են հմտու և հիմնական , խմբաղիք վարժապետ՝ գրադէտ ինչ որ տեսանք զիտութիւն ունի ին քան թէ իմաստակութիւն : Ասոր համար է թէ երես որ իրենց լրադրաց մէջ աւելի բարձր ձեւ մը կ'առնեն վիճաբանութեանց մէջ մեր Պօլսենի խմբաղրաց հետ , և նոյնը նաև դորձածելու կ'ելնեն խօսակցութեանց մէջ : «Եղբայր , կ'ըսէր Թիֆալիցի Հայ մը , ձեր համբաւը մեր մէջ շատ բարձր է և իրօք երկու հարիւր հաղար Հայ էք սա քաղաքիս մէջ . գպրոց , ճեմարան , վարժարան , Ռւտումնական խորհուրդ , լրադրաց ազատութիւն , Երեսփոխանական ժողով , Վարչական ժողով , Պատրիարք , Սահմանադրութիւն և նր մէ ին համբեմ ամեն բան ունիք , և ներեցէք զրուցեմ երբ մօտէն կը նայիմ , շատ զարմանալի բան չեմ տեսնիր , ձեր թնդիւնն ու շոխդն աւելի է քան թէ ձեր յառաջադիմութիւնը , չեմ հասկընար թէ ինչ կը սովորին ձեր աղաքը ձեր վարժարաններու մէջ և ձեր մարդիկը ձեր լրադրաց մէջ , մնկը ձեր Երեսփոխանական ժողովներուն երանի՛ թէ ներկայ չըլլայինք , վասն զի եռանդուն հողուով ներս մոտանք և սառած սրտով գուրտ ելանք : Եւ Պօլսեցին փոխարէն կը պատասխանէր այս ձեկիս վրայ . «Ձեզի ոլլըսաւ որ մեր վրայ համորմանք ունենաք , թէ որ զմել մօտէն աեսած շունէիք մեր լրադիւննը չէիք կարդար , չէիք լսեր , մեր արհետաւորաց աւելորդը ձեզի եւ կալ տապարանապետ ըրիք , մեր համբակը ձեզի եկաւ դասատու ըրիք , մեր պատրիարքական աթուաէն իջեցուցածնիս կաթողիկոս ըրիք , մթնիք ենք աւելի յանցաւոր որ չենք զիտեր յառաջադիմել թէ դուք որ ամեն

տեսակ գործոց և ճամբայ բայ ունիք առջևնիդ, և մեր Սահմանադրութեանը վրայ աշքերնիդ կը պաղի, երբ մեր բոլոր սահմանադրականութեամբ, անօթութեան և խեղճութեան մէջ կը թաւալինք, վասն զի արհեսաները վերջացնան, վաճառականութիւնը Յունը Յունայ ձեռքն է, սպաշտօնները Տաճկայ ձեռքն է, դրամական զործողութիւնք Հրեից ձեռքն են, իսկ մեր երիտասարդութիւնը հաղիւ թէ ծառայութեան մէջ ամսականով զործի մը եթէ դանէ երջանիկ ինքզինք կը համարի. չէ թէ տիտոր և խոժոռ ինչ ընելիքը կը մասածէ : Ուր են մեղի համար այն վարժարանները՝ այն համալսարանները ուսկից գուրս եկող երիտասարդք ապահով են իրենց հայն ու պատիւ զմնելու, նոր է սպաշտականութիւնը զործառնութեանց համար որ օտարականին ծոյն երկրին հարասութիւնը կը թափէ . . . : Այս կերպ խօսակցութեան մը ներկայ դանուեցայ, յայսնի է թէ ամեն Ճշմարտութիւն մէկ կողմը միայն չէր, բայց այս Ճշմարիս է որ Պօլայ Հայ երիտասարդութեան վիճակին երանելի չէ, և զժբաղդաբար օր աւուր աելի ցաւալի կ'ըւլայ . սղութիւնը մէկ կողմէն՝ անզործութիւնը միւս կողմէն, արէտք է աւելցնենք նաև այն հազար ոչնչութիւնքն և սովորութիւնքը զոր քաղաքականութիւնն ամեն օր կը բերէ մարդկային սլիտոյից վրայ կը բեռնաւորէ, այն ատեն զիւրաւ կրնանք չափել վիճակը :

Սիրելի Արոյր, երկայն խօսեցայ, թէ որ արժան և օդտակար կը դասիս այս երկայնաբանութիւնն Ա. Մահլոյ մէջ'ի լոյս հանելու, գու զիտես,* թէ ոչ թու զզրցի մը խաւարին մէջ երթայ ննջէ :

Ա. Պօլիս, 25 հոկտեմբեր 1874:

Դեմես

Յ. Գ. Իմ դանդաղութիւնս, սիրելի Արոյր, գու կ'ուզես համարէ ծուլութիւնս, այս տողերը զրելէս վերջը դեռ քեզի չհասուցած, սրբազն Պատրիարքին նամակը վրայ հասաւ : Տես թէ ես ի՞նչուէս չէի խարուեր իմ կարծեացս մէջ: Խոր լուսթիւնը՝ ահա յայտնի երես՝ որ չէր կամակցութիւն անձունի և յիմար զբարատութեանց և նախատանաց որ քանի մը անարդ և խեղիստակ զրիչներ սովոր են

* Ենչպէս մեք, հաւաստի ենք որ մեր ընթերցողք եւս ախորժանօր կ'կարդան Պ. Փերենցի բանիմաստ զբէն ելած ամէն զրուածք, ուստի եւ միշտ յօժարակամ կ'հրատարակենք:

Պ. Խ.

ժայթքել ընդդէմ անտից որ բարձր են առաքինութեամբ կամ հանձառ
րավ կամ օդատակար ծառայութեամբ աղղին : Եւ յիրափ ժամանակ է ը
որ Ներսէս սրբազն խորասակէր այս լոռութիւնը և յայտնէր իւր միտ-
քը , պէտք է ը որ յայտնի ըլլար ամենուն թէ Հայ աղջն երբ աղատ և
միաձայն հաւանութեամբ Պատրիարք մը կ'ընսորէ կարելի չէ որ անոր
շուքին և հովանաւորութեան տակ քսութիւն և բանարկութիւն բար-
գաւաճէին . պէտք է ը որ Սահմանադրութեան սուտանուն պաշտ-
ամակ՝ որ իրենց հակառակորդաց աղատութիւնը յարդել չեն դիսեր՝
իմանային թէ Պատրիարքական իշխանութիւնն իրենց դործէք չէր
կընար ըլլալ : Եւ ասոնք՝ այդ հովանեմինը 26ի նամակն իմացոց և
յայտնի ըրաւ ամենուն : Կրնայ ըլլալ որ սրբազն Պատրիարքն երբ
ինքզինքը յանցաւոր կը հաւարի պատրիարքութիւն ընդունելուն մեծ
սիսալմունք մը կ'ընէ . վասն զի անոնք որ յաղջէն ՚ի պաշտօն կը հրա-
ւիրուն յանցաւոր են երբ կը հրաժարին . ինք պատրիարքութիւնն
ըստանձնելով սրբազն պարաք մը կատարեց , և մնոք այնպէս կը հա-
ւատանք որ այդ զահին ըրայ ենելէն վերջը՝ քաջութեամբ բաժակը
պիտի քամէ մինչեւ վերջին կաթիլլ : Այս , Գողդոթայի դլուխը՝
Նոպատայ զաղաթը Անոնք որ թեներնին տարածեցին սյդ բաժակը տե-
սան , խորշեցան՝ բայց առին արիութեամբ զընեցին զիթենք , վասն զի
Նախախնամութիւնը ժողովրդոց փրկիչ զիթենք նախասահմաներ է ը :
Խոր վարդապետն էին : Թէ որ իմայս առղերս բարեքարդութիւն ունե-
նան իւր աշացը տակ ընկնելու , զիտեմ որ առանց արհամարհի (վասն
զի սրասը բարձր մարդիկ զալիս չեն արհամարհէր) պիտի զրուցէ .
«Բայց այս կուսակցութեանց անհաշտութեան մէջ ուր երիտասարդու-
թիւնը յանձնապատասխութիւն՝ ծերութիւնը դանդաղութիւն՝ միջին
հասակը անտարբերութիւն առաստաղէս կը ցուցնին , ինչ կրնայ ընել
զոհ մը , միս մինակ անձ մը , թէ պէտ անձնուէր , թէ պէտ անձնուբաց
ըլլայ բոլորովին . չէք տեսներ դուք որ Գողդոթա և Նոպատ կը ցաւ-
ցնէք , որ երբ ես աթզարութեան ձայնը կ'արձակեմ , մէկ կողմը կը
զանդատի թէ ուշ է , միւսը կը տրանջէ թէ շուտ է , և դրականու-
թեան խաժամուժը զլուխը վեր կ'առնէ իւր ձախնային վայբերէն կը
շարժէ , կը սուլէ և կ'ըսպառնայ և աղբաները կը ցաւցնէ » : — Այդ
վիճակը յայտնի է , սրբազն Տէր , բայց գու լաւ զիտես թէ արդա-
րութեան համար ընկնողները չեն ընկնիր , այլ կը բարձրանան և վեր-
ջապէս կը յաղթեն :

ԱՅՍՏՐՈՆԾԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Այս վերնադրով՝ աղջային դործոց հմտւտ և խորհուղ Մեծ, աղջայինեւ մը հետեւալ նամակաձեւ յօդուածն ընդունելով կ' հրատարակենք անկրողնապահութեամբ, թէպէտ ինչ ինչ կէտերու նկատմամբ տարբեր կերպով կ' խորհինք .

... Խորադիր ԱրԵւէլան Մամուլ հանդիսի,

Քաղաքիս աղջային իրարանցումը հանդարս կերպարանք մ' առած, երկարաւակեալ կուսակցութիւնք անտարբերութեան անդունդը դլրած կ' երեխն, աղջային իրերու թարդման եղողներն ասպարէդէ անյայտ եւ դած են: Արդարեւ զարմանալի փափոխութիւնն. ասկէ քանի մ' ավիս առաջ կարծես թէ ամէն անհատ Պիզմարդ մը դարձած էր, հայ շմայ որ իրարանցումի ատեն կուսակցութեան մը չշակի և մեծ մեծ վճիռներ չարձակէ, բայց հիմակ, ոհ, ամէն ոք խորին լուռթիւն կը պահէ, և կարծես թէ ուրիշ մարդ մը դարձած է. չենք կրնար հաստատել թէ այս ընթացքը համոզումի հետեւանք մ' է, այլ ընդ հակառակին՝ աւելի զօրաւոր փաստեր կ' գանենք հաւատալու՝ թէ այս միայն առ ժամանակեայ լուռթիւն մ' է, որ փոթորիկ կ' սպառնայ, և եթէ ժամանակին առաջը չառնուի, զուցէ կարծուածէն աւելի անհաճոյ արդինք ունենայ, վասն զի ստոյդ է թէ երկարաւակութիւնը քաղաքու ծնունդ առաւ, իսկ դժբաղդաբար կեղրոնական վարչութեան կողմէ ալ մոռնդ զաւու, և այս սպատճառաւ սպարզ ինդիր մ' այնչափ դարձածներու ենթակայ մնալով՝ աղջը նիւթաղիւ ու բարյասկէս կը մնաստի: Այս այնպիսի յայտնի Շշմարտութիւն մ' է որ Կեդրոնական վարչութիւնն կարող չէ ծանր սպատասխանաստութենէ մը աղասիլ և արդարանալ Աջամիս աղջայոց առջև, վասն զի Կեդր. վարչութիւնն իւմբրիքը խռովութեան մէջ սեսնելով՝ մնատի փառափրութենէ մը շարժեալ, ուզեց այս նեղպարագայէն օգուտ քաղել. . . (այս տողերը զուցէ օր մը աւելի ընդարձակ կերպով բայցարուին):

Տարակոյ շռնկնք որ հիմակ ալ այս փառքին հասած կ' կարծէ, և ասոր համար է որ մինչ ցարդ վհաւական անօրէնստութիւն մը չըներ որ-

պէս զի ժողովները կազմուին , և աղջային կենսական դործերն օրինակ ւոր ընթացքի մէջ մանեն : Ի՞նչ է ուրեմն իր նորառակը , ըստ մեզ Կեդր , վարչութեան իր քաղաքական հետամեսութիւնն է , որով հարկ կ'սեպէ՝ իզմիրցոց դլուխ ծուել տալու համար (այս փառքին համենշու ՚ի բնէ տածած մէ կ փափաքն է) տեղապահի խնդիրը յարա մար առիթ մը բռնել , զայն օրորոցի մէջ զնելով օրորել , որուես զի իզմիրցիք բոլորովին խանդարին և իրենց լաւ հանգամանաց հետ զօրութիւննին կորսընցընեն և սկսին մը Կեդրոնական վարչութեան կամքովը շարժիլ և անորմէ յօյս ու լոյս սպասել . . . : Սառդիւ՝ սյսպիսի տրամադրութիւն մը մեր ծիծագը կ'շարժէ , վասն զի քանի որ մնաք իզմիրցոց բնաւորութիւնն իրմէ լաւ զիանք համարձակ կընանք բսել և հաստատել , թէ իզմիրցիք Կեդր , վարչութեան կամաց այն ատեն միայն կրնան հպատակիլ երբ զանի օրինաւորութեան մէջ տեսնեն և վտահութեանն արժանի դատեն : Քանի որ այժմ Կեդր , վարչութեանը ընթացքը բոլոր դաւառաբնակ հայոց ցաւալի զղուանք կը սպասձառէ , կարելի չէ յուսալոր իզմիրցիք հաճին երբէք Կեդր , վարչութեան կամքովը շարժելու :

Ծառ հետաքրքիր ենք դիմանալու որ , եթէ իզմիրցիք միտում մ'ու նենան Կեդր , վարչութեան հետ ունեցած յարաբերութիւննին տարբեր համբու մը վրայ դնելու , ի՞նչ զօրութիւն կայ այսպիսի միտումն արշ դիւլու , * մանաւանդ այսպիսի ժողվրդեան մը համար որ հպատակ կութեան պայմանները հաւատարմութեամիր կը կատարեն և կ'ուղեն որ իրենց շնորհուած արտօնութիւններն անխափն վայելեն . անլ է այն մարդը կամիսումքը , որ այս տեսակ արտօնութեան մը վրայ իր զօրուաթիւնը զերաբնայել ուղէ : Մեղ այնպէս կը թուի թէ Կեդր , վարչութեան հետատեսութիւնը սովորակի նեղ շրջանի մը մէջ կը գեղեցի , և առկից կը հետեւի որ իր չափն ու վիճակը մոռնայ ու իրեն շնորհուած սպարզ արտօնութիւն մը զօրութեան տեղ առնու . . . :

